Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Մաս մ աշխատանքն արտոնագրված է «Մտերմաբարոյական ձամայնքներ
ոչ առևտրային իրավատերերն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) License.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
մեկնաբանել կամ մշակել առկա նյութը ստեղծելու համար նոր

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

# ԼԱՆՏԵ

## ԲՌՈՒՆՑՔ

ԿԵՆՍԱԳԻԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ЛАНТЕ

„КУЛАК“

(Быто-поэма)

1925

ԲԱԿՈՒ

Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք.

# ԼԱՆՏԵ

## ԲՌՈՒՆՑՔ

ԿԵՆՑԱՂԱՊՈԵՄ

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԲԱԳՈՒ 1925.

Տպարան «3-րդ Ինտերնացիոնալ»

# ԲՌՈՒՆՑՔ

Կենցաղապոեմ

Կամ

Կինո-ժապավեն
7 եսքիզեն.—
Ինչ կուզես
համարիր
ընթերցող։

## ԵՍՔԻԶՍ.

1.

Շաղփաղփուն, շռինդի
շուկա,
Շառագույն իջել ե
շառափ.
Ուզում ես միշտ շրջես
ուր կա՛,
Ու խմես սառուցե
շարաբ։

Շրշղուն, սուր ճիչեր, շառաչ,
Շարունակ, ընչահատ «հայ...հայ...»
Զայներ ու բազարի հառաչ
Շրջան են բոլորել ահա։

* * *

Կեսոր։
Կառքերն են կայթում.
Շուկայում՝

Զեռ կյանքն է արթուն.—
ժիսոր։

Զես կարող, թե շվաք ճարես,
Արևը շիկնել է հնոց.
Շողակաթ շանթում է յերես,
ժայթքում է բազարը հևոց։

Բռնել է աղմուկ ու դղորդ
Ծանր-շունչ խլացնող ականջ,
Իսկ հեռվից լսվում է մի խորթ
Հոգետանջ ցավագար հառաչ..

---

* * *

Զընգ,
հա,
զընգ...
Զընգ,
հա,
զընգ,
զբրունգ
ժապավեն դեղին.—
Պարզած քիթ պռունգ
Ուղտերը՝
Բռնել են ուղին։

Հազար մի
նազանքով
դանդաղ
Հագիվ են
փոփոխում
կրունկ,

Ներդաշնակ
հնչում է
մի տաղ,—
Զընգ-հա-զընգ,
զընգ-հա-զընգ,
զբրունգ...

Բայց անա տրամվայն է սուրում,—
—Ճանապարհ, դավաչի, հայդա՛...
Շրջվում է ուղտերի սուրուն,—
—Խաբարդա՛, խաբարդա՛, ա՛դա։

Զուլվել են ձույներ ու վորոտ,
Աղմուկ կա խելագար վագքում.
Այսպես է իր կյանքով տենդոտ
Դարաշեն աղմկոտ Բագուն։

Զը՛նգ-հա՛-զը՛նգ,
Զը՛նգ-հա՛-զը՛նգ,
Զրո՛ւնգ։

2.

Ա՛յ, փոշում նստել է պարսիկը՝ գիրը բաց
Ու խոսում դիմացին թալիսման սրտաբաց.—
—Քո դուռը,—ասում է,—շատ շուտով կբացվի
Ու բուռդ—անհամար վոսկե գանձ կթափվի.
Դու մեծ վարձ կստանաս ալլահից անպատճառ,—
Քիթ-քթի փսփսում խորհուրդներ վոսկեշաբ։

Դրել է
մորուսին
խինա,

Գրում է
շշուկով
թալիսմ,
Իսկ
մեջքին
հազար մի
փինա,
Թե նայես՝
կատարյալ
տրագիզմ։

Մտել է բազարի խորքում,
Դրել է իր հաժար մի բուն,
Բեխաբար անցորդ է խաբում։

Այսպես էր դեռևս Բագուն։

* * *

Ահա և չիստիլչի Բախշին,
Յեկել է իր բախտը հանի,
Թե՝ յեկող ոգոստոս ամսին
Քանի հատ կաշխատի շահի։

Դիտում է, կասկածում փալչին.
—Ա՛յ տղա, կոմյերիտ հօ չե՞ս.
Քերթեցին մեզանից կաշին,
Աշխարհը մթնել է կարծես։

Ջահելը չունի ել շնորհք,
Ջահելը մեզ ել չի լսում.
Փչել են գլխներին ցնորք,
Կարծում են՝ տվել են ուսում։

Ասում են՝ «դուք սուտ եք խոսում,
Իբր թե՝ ալլահը փուչ է.
Կազմել են վոտաբաց դոշուն,
Զափում են հանդեր ու քուչեք։

Ամենքը գժվել են, ա՛չի,
Երեկվա փսլնքոտ Պետկոն,
Վոր մեջքին կրում եր կաշի,
Եսոր նա դառել է պատկոմ։

3.

Կեսոր։
Կառքերն են կայթում.
Նորից
զեռ կյանքն է արթուն։
Արևը — արյուն։
Շոգը՝ այրում։
Կրկին յերգ ու կանչ.
Ականջ
Խլացնող աղմուկ.—
«Լավ խնձոր, կանաչի՜...»

* * *

Յերեկո։
Վերջալույս։
Քամի—
Բագվա խնամի։

Ահա
Յեկեղեցին ցից,
Փայլում է կատարը խաչի
Նրա ճաճանչից՝
Փնջել են գույները վոսկե

Առկայծող տանիք։
Զարդ տեսք է։
Խորասույզ
Տերտերը խառով
Դռան մոտ,
Փմծիծաղ՝ սրում է ժանիք։
Շարքերով
Անցնում են գորքերը կարմիր։

* * *

Տրոփ, տրոփ,
տրոփտրոփում է,—
տրոփ, տրոփ։
Դոփում
սրբակները
վորոտ։
Կարմիրը
ձիարշավը
վաշտ-վաշտ
Խիզախ
արշավի է
պատրաստ։
Ու ծույլ—
լայն բացելով
յերախ,
Մութը
պարուրում է
մարտդ,
Ապա
«Նորդը» հաջում
վատթար,

Վորպես
մրթմրթացող
քավթառ։

* * *

Անցնում են զորքերը կարմիր,
Զորքերը հողթական.
Դրոշներ կարմիր—
Թնդում է
Մուզիկան։

* * *

Ա՛յ, խաչը ծռվել է մի կողմ.
Տերտերը մռայլ է, խոժոռ,—
—Կփչի՛, կփչի՛ սաստ հողմ,
Սուրբ խաչը կթռչի անզոր։

Անցնում են զորքերը կրկին,
Ծածանվում դրոշներ կաս-կաս.
Տագնապ է Փիստոնի հոգին,
Տանջում է մի կրծող կասկած։

Աղմուկ է ու քաոս չորս դին,
Նոր կյանքը ծնել է խենթ զարկ.
Շվարած Փիստոնը շեմքին՝
Դիտում է դահլիճը դատարկ։

* * *

Պսպղում է յեկեղեցու կատարը լերկ,
Շողշողում զվարթ՝
Դղրդում քուչեն
Ֆանֆար ու քայլերգ։

Շվարել է
Տեր Փիստոնն անթարթ։
Իջնում է դալկոհար
իրիկուն.
Լուռ տագնապ—
տերտերի
հոգուն։

---

## ԵՍՔԻՋ Բ.

Ցցվել է աշտարակ ոդում,
Մի ձեռքով յերկինքը նախշել.
Այնտեղ կա հավատ ու յերդում,
Այնտեղ միշտ իսլամն է իշխել։

Կես-լուսին, սրբազան մեչիդ,
Կես-լուսին՝ յեղջյուրե գավաթ.
Դարերի խոստումն է, վոր հեշտ
Կորզել է ամբոխից հավատ։

Ամբոխը լսել է քարոզ,
Դարերով մոլլան է խոսել,
Թե միակ ղուրանն է փարոս,
Թե ալլահ հենց ինքն է իջել։

Դրել է մզկիթը կնիք
Դարերի խորշոմած դոշին.
Ամեն ինչ ծածուկ է, գաղտնիք,
Վորտեղից իմանար Բախշին։

Վորտեղից իմանար Բախշին,
Թե մոլլան ստեր է փչում,—
Բայց չե՞ վոր, Հուսեյնը, Հաջին
Առել են իմաստուն ուսում։

2.

Բագու։
Բացվում է շառագույն բեհեզ,
Վորպես քնքույշ քույր
Լուսածեգը -

Հանում է գլուխը հեզ.
Քայում է մատներով լուսե,
Կլանում հանգիստ
Մութի վարագույր։
Փռում է շրջազգեստ հրե
Հեռու, հեռու—
Վիշկաներին,
շենքերին քարե,
Մզկիթների կատարները կապույտ,
Հինավուրց բերդերին,
Կիսավեր, կարկամած պալատ,
Ապա՝
Տարածում,
սփռում
փողոցի
ասֆալտ։
Լուռ է Բագուն։
Խառնիճաղանճ
Վորոտները դեռ չկան.
Ամեն ինչ՝
Խորը քուն.—
Բայց քիչ անց՝
Կսկավի կական,
Կշտապեն կառքեր.
Գրանիտե մայթով
Կսողա ժխոր։

Կպոռա շուկան
Տրամվայ, սուլիչներ
Քառսե յերթով
Կկազմեն համերգ,

Կրկին կլսվեն տենդային ճիչեր,
Կվոռնա Բագուն
Հազարաբարբառ
Հորձանքե կյանքում։

3.

—Իլլյահու—
Իլ-ալլահ—լայ-իլ...
Լսվում է շնչահատ ղողանջ.
—Լայ-ի—լայ, Իլլյահու իլ—ի,—
Խլոցնում անցորդի ականջ։

—«Լա՛յ—իլ—լա՛յ...»—դիտում է Բախշին.
Մոլլան է ֆարդարում պատին.
Նայում է և Ալին ուշիմ
Պտտվող եակի վատին։

* * *

Ու
Ցցվել է աշտարակ,
Սուր ճեղքել ամպեր
Մինարեն.

Վերևում պատշգամբ. հրեն՝
Կանգնած է Հուսեյին խոջան,—
Ցերգում է աղոթքը, նորեն՝
Կատարում կրկին մի շրջան։

Լուսաբաց։
Ագռավի կռինչով
Ցերգում է, դայլայլում,
Ցերախը արշին բաց։

Ջիններթի
Յեռանդով
Յերգում է մի աղոթք,
Սրտառուչ մեղեդի։

* * *

—Ինչո՞ւ յե նա մատը ցցում,
Ոդի մեջ ասում է քարոզ.
Լերկ գլխին սվաղել «մածուն»
Ու տնկել փիրուզե քորոց։

—Ի՞նչքան լայն բերան է, հատա,—
Մոքի մեջ ասում է Ալին,—
Ու հագին խալիսե կապա,
Բոլորն էլ պարգև է մոլլին։

4.

—Տեսնո՞ւմ ես,—
ասում է Բախշին,—
Վոսկի
Նա էլ է աշխատում.
Թեպետ
արևակեզին,
քրտինք չե թափում,—
բայց ապրում է
բեկ։
Մենք ենք խեղճ,
վոր ըսկի
Հազիվ ենք մի հացի
աշխատում կոպեկ։

Այսպես են
մոլլա, քեշիշ ու
կապի։
Տեսնում ես,
ինչպես է կլկլում,
կարծես թե
ջեննեթ է
քայլում։
Ե՜հ...
Բոլորը, բոլորն Ալի,
Խաբուստ է, շինծու յե
ու սին։
—Ծուս, Բախշի,
մի ասա եղ
հավատի մասին։—
Իսկ հոգու խորքում
Փինաչի Ալին
կրկնում է նորեն.
. . . . . բոլորը, բոլորը Բախշի,
Խաբուստ է, շինծու յե
ու սին։

5

Քայլում է մարգարեն վստահ,
կարծում է՝ թե ինքն է, վոր կա,
կարծում է՝ ճնշել է Բագուն
Իր ձեռքին հայցելով անքուն։

—Լայ—իլ—լայ... բացել է յերախ,
Թվում է, թե ինքն է իշխան.
Ամբոխը վոչխար է ախմախ,
Ամբոխը խավար է ու խամ։

—Թող ինչքան ուզում են—խոսեն,
Կրոնը կմնա կանգուն.
Լուսնյակին շները հաջեն,—
Դեռ ուժ է մոլեռանդ Բագուն։

Բռնել է աշխարհը դուրան.
Հավատը՝ խորիմաստ ու ճիշտ
Հին Պոլսից մինչ Կովկաս-Թուրան
Կվառվի բոցավառ ընդմիշտ։

Երջում է Հուսեյնը գոռոզ.—
—Կտիրենք աշխարհից-աշխարհ,
Կփայլի իսլամը փարոս,—
. . . Իլլյահու—իլ—ալլահ... իլ—լայ...

6.

Երջում է հայացքը պղտոր,
Դիտում չորս դին.
Իր վոտքերի տակ
Փռված են մթին
Տանիքները հարթ։
Իսկ
Հեռու... հեռու,
Թեթև մառախուղ,
Ուր,
Վիշկաներն են
Մրե շղարշ հագել,
Քթերը յերկինք պարզել,
Վորպես բուրգեր յեգիպտական.
Իրար հետ կապել դաշինք.
Ու կամ
Մումիաներ հսկա։

—Անտեղ հեղուկ կա
Սև-հեղուկ՝ արյուն.
«Պետք է,
դա
քամ
տալ,
ապա
կրակ
տալ,
վոր
տուն-տեղ
դողա...
վորպես
իսլամ՝
—
բոց գցել
շրջվի աշխարհ-աշխարհ,
ջնջի ամեն ուսմունք,
ու վողջ զոհվի Մուհամմեդին,—
միայն իշխեն
Մեկկա—Մեդին»։

Ա 11/4454

## ԵՍՔԻԶ Գ.

Կանգնած է Աթուն զարմանքը դեմքին,
Նայում է ուշիմ հին յեկեղեցուն
Մերթ ել տերհորը մատուռի շեմքին.
Ու մտածում է Աթուն յերազուն։

Կանգնել է ահա Փիստոնը խոժոռ,
Կանգնել է Աթուն թաղից Սաբունչի.
Ու չի հասկանում թե մինչև այսոր
Ինչո՞ւ չե տված տերտերի դունչին։

Ինչո՞ւ յե կանգնած շենքը անոգուտ,
Ինչո՞ւ չպետքե դա լինի մեր տուն.
Վաղուց կրոնը դառել է խաբուստ,—
Այդպես եր դատում կոմյերիտ Աթուն։

Ու հանկարծ մի միտք հղացավ գլխում,
Մեխվեց շեշտակի, ծավալվեց իսկույն.
Այդ այն Աթուլի, վոր հեռու գյուղում
Նոքյար եր մի որ աղայի ձեռքում։

Այդ այն Աթուլի, վոր Հայաստանից
Ընկել եր Բագու՝ թաղը Սաբունչի.
Դառել եր բանվոր, հեռու իր ընից,
Նավթե աշխարհում մրոտ տարտալչի։

Ու քանի գնաց, միտքը մեծացավ
Յերևաց այնքան գրավիչ, պայծառ,
—«Պետք է վոր ժամը խլել—նա ասավ,
Փոխել ակումբի խալխին հավասար»։

---

## ԵՍ ՔԻԶ Գ.

Ուշ գիշեր։
փեշերը քաշել
նիրհել է Բագուն։
Թվում է,
թե «ալլահն» է փռել սև կապան
Ծածկել քաղաքը։
Հրես
մի անքուն պահապան
շվշվացնում.
Կամ թե՝
ուշացած ճամփորդ
Գրեթե
վազելով
անցնում.
Մերթ էլ
սրընթաց
ավտոմոբիլ,
Զռում
աչքերը
շիլ.
Վարկյան.
քուչեն դղրդում։
ապա լուռ։
Հեռվից
լսվում է
մի շան
մրմուռ։

Իսկ
մի
ծայրամասում,
մի թաղ կա խուլ,
ուր կայծ է առկայծում,
ուր շենք է խարխուլ։
Ճակատին ցուցանակ
խունացած,
իսկ ցած՝
անճոռնի նկար՝
գլանակ, թեյաման,
բաժակ։—
Պարում են սրտաճաք,
խելագար . . .
Իսկ
քիչ
ցած
Գրած.
ծուռ
մուռ
թեք
Շարած՝

## «Զ Ա Յ Խ Ա Ն Ա»

Տակը պետիտով.—

. ով մանի՝ սիրտը զովանա

* * *

Ուշ գիշեր է,
բայց դեռ բաց է
Զայխանան,

դեռ
յել,
մուտք
Անում,
լուռ
քող
շալ
Հանում.
ինչ վոր
մութ-մութ
ստվերներ,
սողում
դուռը բաց։
Ներսը՝
կիսախավար։
Սեղանին՝
մի ժանգոտ
սամովար։
Լսվում են
շշուկներ ներսից,
լսվում է զառանցանք,—
արի՛ մենք ել ներս յերթանք։

* * *

Շքեղազարդ
լուսավոր
սենյակ,
գորգեր հատակին,
պատերի վրա։
Մեջտեղում
հրկեզ
մի վառվող
քուրա։

Ցոլառատ,
կարծես ծածկամիտ նշան.
Թեժ,
կռապաշտ
ատրուշան,
Թվում է պիտի լինի
խորհրդավոր մի ծես։
Ինչ վոր մի եակ
կանաչ
չարսավը մեջքին,
պտտվում է քուրայի շուրջ
կամաց,
խորհրդավոր ու լուրջ,
վերցնում է կրակ,
դնում գլանակին։

* * *

Իսկ չորս կողմը հյուրերը, հյուրերը.
Ամեն սեռի, ջուռա, ջուռա,
Վորը զվարթ, վորը յերեր
Ձեռք է պարզում դեպի քուրա։

—«Ե՛յ, «Շեկ-Մորուս», թեժ գլանակ.—
Աղերսում է մի նկարիչ.
—Պիտի ծխեմ յես անքանակ,
Թե դինջանա հոգիս կարիճ։

* * *

Կոչվում է եակը Ոսման,
Ցերեսին խորդուբորդ կնճիռ.
Գիշերվա բայդուշի նման
Բոցաաչք հայացքով զազիր։

2.

Այստեղ է իմաստուն Հաջին.
Բերել է հույզերը իգիթ
Չե՞ Նրան ասել է փալչին,
Թե կլինդ հաստատ չե կամքիդ։

Այստեղ է պրոֆեսսոր հայտնի.
Ցեկել է մոռացման անկյուն,
Ցեկել է, վոր այստեղ գտնի
Նորանոր ցնցումներ ու քուն։

Ցեվ ժոլյա Հուսեյին խոջան,
Իսկ կողքին է Փիստոն քեշիշ.
Կապել են կրակին շրջան
Ու անհագ քաշում են հաշիշ։

Հրես և դերասան Պա-լաս.
Դարձել է վավաշոտ արու,
Կարծես թե մի անպետք փալաս
Անցած ու ժոռացման դարու։

Բոլորն էլ ծանոթ են այստեղ,
Քչերն են, վոր գիտեն դրսից,
Թե այստեղ ծախվում է մի դեղ.—
Քաշում են՝ անաշա, հաշիշ։

Թռչում է կանացի մի խումբ.
Վողողած դեմքերին ըշպար,
Կիսամերկ վոլորվում ու թունդ
Թռչկոտում բարբարոս շուրջպար։

Արբել է Փիստոնը ծպտած,
Թողել է փառաջեն, ապա՝
Լայնեզը խորշերով պատած
Հագել է դերվիշի կապա։

Դրել է հաշիշը խիտ ամպ
Փիստոնի ծանրացած գլխին.
Խոսում է, զառանցում անկապ,
Թավալվում գորգաղարդ թախտին։

Ահա և բանաստեղծ Լանտեն.
Մտել է մի անկյուն ծածուկ,
Դիտում է խազմզում, մթեն
Ունկնդրում ամեն մի շշուկ։

—Տես, խոջա, տղային այդ գոռ.—
Փիստոնն է մոլլային ասում.
—Անպատճառ կլինի բաբկոր.
Եղ ինչ է տետրակում խազում։

—Թող, Փիստոն, ինչ բաբկոր, ինչ բան,
Մթնել է կատարդ, քեշիշ.
Ալլահի շվաքին դուրբան,
Եհ՝, քաշիր մի դանա հաշիշ։

Ամեն տեղ յելել են մեր դեմ,
Ասում են՝ կրոնը սուտ է.
Յեկ դաշինք հաստատենք արդեն,
Քանի դեռ ամբոխը մութ է։

—Եհ՝, խոջա, առաջ եր խավար,
Տուր դեմդ, տար լցրու մի գոմ.
Իսկ հիմի աղջիկս ել, ավաղ,
Գընացել, գրվել է պատկոմ։

—Մի վախիր, թող գնան գրվեն,
Դեռևս ամուր է մեր կույս.
Դեռ պիտ գան մեղքերը քավեն,
Աշխարհը տրաքվի թեկուզ։

Յեկ ջնջենք, մեր հաշիվն առժամ
Մահմեդի, Հիսուսի միջև.
Ուժերը մենք չանենք բաժան
Ու դուրս գանք վտանգի առջև։

* * *

Փռվել է մի գապատ քուլա...
Գրկել է սենյակը մրափ.
Պարում են տերտեր ու մոլլա,
Խելագար զառանցում քնարը։

—Թող կորչի՞
Քրիստոսը,
Մահմեդ,—
Խելագար Փիստոնն է գոչում.
—Թող կորչի՞
Քրիստոսը,
Մահմեդ,—

Խոջան է թավալվում փոշում։
Չե՞, չե՞, չե՞, Մուհամեդն ասաց՝
Իսլամը կտիրե աշխարհ.
Թող կորչի՞
ամեն մի կասկած.
. . . —Ի՞ллահու—ի՞л—аллահ—ի՞л—лա՞յ...

Ն.

Լուսաբաց։
Զայխանան թույնի
Գառկել է ծանրաշունչ գրկում.
Նա էլ ցավ ու հոգսեր չունի.

. . . . . .

Այդպես էր
ծածկամիտ
բագուն։

Ն.

Լուսաբաց։
Զայխանան թույնի
Գառկել է ծանրաշունչ գրկում.
Նա էլ ցավ ու հոգսեր չունի.

. . . . . .

Այդպես էր
ծածկամիտ
բագուն։

Սկզբում խրատեց Մաշոն,—
—Դու ինչ ես—մի բանվոր գյադա,
Չես գնի դու նույնիսկ ժածոն,
Ո՞ւր մնաց պաղպաղակ, գաթա...
Ո՞ւր մնաց թե հագուստ կերպաս,
Պսպղուն կոշիկներ, դուխի.
Որերով պահում ես դու պաս,
Վոր թե՝ փող հավաքես չուխի։

Շատ խոսեց համոզեց Աթուն,
Թե թավշե ունենալ հագուստ,
Այդ դեռ չե ծաղկապարդ գարուն,
Այդ դեռ չե յերջանիկ ապրուստ։
Թե փողը չե տալիս մեզ կյանք,
Բոց սերը պիտ կապի անչար.
Յեվ վոչ թե կերպասներ թանգ-թանգ
Ու կամ թե ուտելու պաշար։
Ու վերջը կոտրվեց Մաշոն.—
—Լավ,—ասաց,—կգամ քեզ, Աթու,
Միայն թե պսակը ժամում,—
Յես այդպես կգնամ մարդու։
Տանեցիք այդպես են ուզում,
Ի՞նչ անենք, անուս են ու մութ,
Առայժմ նրանց եմ լսում,
Նրանք ինձ տվել են անունդ։
Մտածեց, մտածեց Աթուն,—
—Չե,—ասաց,—չեմ կարող։ Հոգ չե,
Դնա դու ուրիշին, խաթուն,
Թող սերս այսուհետ հանգչե։
Ի՞նչ անենք, վշտահար դառած

Պիտ սիրաս կարատվի բեկ-բեկ,
Չեմ գնա տերտերի առաջ,
Չեմ փոխի համոզմունք յերբեք։

2.

Թիկնել եր Բագուն
Բյուր
հուր
աչք
հառած
Ելեկտրական.
Յերբ, պայուսակը կռան տակ առած
Մաշոն՝
ըշտապում եր տուն...
Ճամփին մտածում,
ինչքան մտածում,
այնքան նա
իրեն եր անիծում։

* * *

Վաղուց իր գլխում Աթուն եր մեխված,
—Հերիք է, հերիք,—նա ել եր զգում.—
Պետք է հնին տալ մահացու հարված,
Բավ է համբերել փակված վանդակում։

Ու նա միտ բերեց սենյակում փակված
Սոխակ է յեղել վանդակում փոքրուց.
Յերբ վոր տառերը ճանաչեց նվազ,
Դպրոցից հանին ու մնաց թերուս։

—«Հերիք է, հասավ չորրորդ դասարան,—
Իր հայր կարպիչն էր ցնծալի խորհում,—
Այժմ պետք է շուտ պսակել սրան,
Թե չէ, ով գիտե, ինչ է պատահում»։

Բայց յեկավ մի որ հեղեղը քանդող,
Կռիվ ու պոռթկում, հեղափոխություն.
Կարպիչի հոգուն պարուրեց մի դող
Ու նա կորցրեց և՛ վոսկի և՛ տուն։

Եվ չմտածեց Մաշոյի մասին,
Եվ ով կնայեր եգին ու վորձին.
Յերկար միտք արին ու վորոշեցին.
Մաշոյին դնել սովետի գործի։

Ու ահա մաշոն գրագիր փոստում.
Կինն ու Կարպիչը սպասում, արդյոք,
Թե յերբ է Մաշոն սենյակը մտնում
Ու բերում իրենց աղքատիկ «պայոկ»։

* * *

Անցան որերը, ու նորից ահա
«Մեծ-Ծովյան» փողոց,—գրգռող փեշակ.
Նեպման է դառել Կարպիչը հիմա,
Վիզը հաստացել, ուռցրել կզակ։

* * *

Յեղել եր Մաշոն գրագիր փոստում,
Այնտեղից մի կերպ բանֆա՛ը մտել.
Թեկուզ ամեն որ հայրն եր սաստում.
—«Ուզում ես, աղջի, մեր տունը քանդել..»

— «Ի՞նչ ունես այնտեղ, ինչ կանես ուսում.
Յեկ քեզ նշանենք անվանի մարդի,
Թե չե գնացել, չեմ ել ամաչում,
Ընկեր ես դարձել գյադի ու գյուդի»։

3.

Ամանութը կոչվում եր. «L' chic»
«Մեծ-Ծովյան» փողոցի միջին.
Ծախում եր խմիչքներ յերշիկ,
Զոռ տալիս ապխտած մսին։

Ճակատին մի հսկա թիթեղ,
Իսկ վրան՝ գույնզգույն նախշեր,—
Մի ծայրին խոզի ճուտ, այլ տեղ
Հինավուրց Բաքոսի կժեր։

Գործերը լավ եյին գնում,
Ուներ նա հավաքած շատ գանձ.
Միայն թե Կարպիչի հոգում
Մաշոն եր. «խելքահան, անսանձ»։

Հուզված եր Կարպիչը սաստիկ,
Մաշոն եր «անարժան» զավակ.
Այդպես ել աներես աղջիկ՝
Գնացել մտել եր բանֆակ։

—«Ա՜յ աղջի՛, եդ ի՞նչ ես բռնում,
Մի նայիր աշխարհի տեսքին.
Ուսումը դու ի՞նչ ես անում,
Ուսումը ինաս ե եդին։

Քո շուրջը, մի նայիր անխելք,
Սոցիալիզմ, սոցիալիզմ չկա.
Ամեն տեղ առևտուր ու խելք,
Ամեն տեղ կապիտալ հա՛լա։

Դրանն է աշխարհը շարժում,
Առևտուր և վոսկե կողով,
Բայց վոչ թե խելքահան ուսում
Ու կամ թե կանացի ժողով։

Թող մի մեծ վաշխառու լինեմ,
Աշխարհը նվաճեմ ձեռքիս.
Տես ինչ՝ Մաշո, տես, կանեմ,
Կսարսեն իմ վոսկե տեսքից։

Յեկ, աղջի, խանութում մնա,
Աշխատիր, սովորիր արհեստ.
Թող գործս անվրեպ գնա,
Տես՝ ինչպես կբացեմ տըրեստ»։

4.

Այսպես ամեն որ հայրական քարոզ,
Այսպես ամեն որ նախատինք ու թուք.
Մեկել վրդովեց աղջիկը զոռոզ,
Ու թվաց նրան ամեն ինչ խղճուկ
Ու թվաց հայրը զզվելի, լպիրշ,
Խանութ ու ապրանք, հաշիվ ու փարա,
Ել չհամբերեց ու ասաց հակիրճ,—
—Թքել եմ խանութ ու փողի վրա,
Չեմ ուզում մնալ, յես տգետ, անուս,
Ինչպես յեղել եք՝ իմ մայրը և դու.

Հայր, յես ել ունիմ պատիվ ու նամուս,
Հերիք ե, վոր դուք, ինձ խեղդեք հլու։

Բարկացավ հայրը գոռգոռաց յերկար.
— «Յես քեզ իմ տունից դուրս կանեմ, աղջի,
Յերկու որից հետ, թե խելքի չեկար՝
Ել ինձ քո հայրը դու մի ճանաչի։

Ուզում ես գլխիդ դնել բոզ կեպին,
Բերնումդ ֆռռա «Extra» պապիրոս.
Ուր վոր ցանկանաս, գնաս քո քեֆին,
Ու մեզ ել շինես քեզ պես բարբարոս։

Թե՞ կուզես հագնել սև կաշվե բաճկոն.
Թև-թևի տված դու գյաղա-տղոց,
Կոմսոմոլ, կամ թե պատկոմ ու մատկոմ,
Զափշփես անհոգ փողոցե-փողոց։

Յեկ դու ինձ լսիր, խանութում նստիր,
Վերջին անգամն եմ. Մաշո, քեզ ասում.
Հանիր գլխիցդ մտքերդ պատիր,
Վոր քեզ մարդու տամ մինչև ես աշուն։

Յես քեզ գտել եմ մի լավ փեսացու.
Վաճառական ե մանուֆակտուրի,
Ինձ ել հենց պետք ե մի վերակացու,
Կպչենք միասին զոռ առևտուրի»։

Ել վոչինչ չասած Մաշոն խիստ լարված,
Աթուն ասել ե,—ինքն ազատ մարդ ե.—
Պետք ե հնին տալ ահավոր հարված
Պետք ե հնին տալ հարված յերկաթե։

## ԵՍՓԻԶ Զ.

1.

Կիտել է ունքերը
Կասպին.
Փնչում շնչահատ.
Ալքերը փրփրադեզ
Ծառս-ծառս
Գալիս են, հարվածում
Ափին։
Բորբոքվել է «Նորդը», խաղում ծովի հետ
Խելագար մի ֆարս։
Ու նավն ինչպես հոլ
Գլորում է, շրջում խենթ,
Անավոր լախտ՝
Կասպին։

2.

Կանգնել է ահա գոռ նավի ղեկին,
Անսասան, վորպես պահապան արթուն.
Ունկնդրում խոժոռ քամու խոլ յերգին
Հայացքը հեռու՝ կոմսոմոլ Աթուն։

Թող փչե «Նորդը» ու նավն որորե,
Տղերքը զվարթ յերգում են պարում,
Այսոր հանդես է, այսոր մի որ է,
Յերբ պիտի փլվի նախապաշարում։

2.

Հրապարակ։

Արձան։
Մի փոքրիկ այգի։
Վերևից դիտում է Սաբիրը քարե։
Կարգ-կարգի
գալիս են
կոմյերիտ,
պատկոմ,
վորպես ծովը վարարե
Փրփրադեզ։
Այսոր պիտի լինի
անսովոր հանդես։

Վերևից դիտում է Սաբիրը
Ուշիմ.
Զարմանք է դառել բանաստեղծը հին.
Նայում է, նայում այս նորեկ
Ուժին,—
Գցել է չադրան նույնիսկ թրքուհին։

4.

Յելել է աշխարհդ, Սաբիր,
Զարթնել է դարավոր ննջից.
Յել դու էլ այս բոցով սրբիր,
Յերգ ըմբոստ, վորոտա նորից։

Կապել է կաս-կարմիր քաթան,
Քո խալիսը բեգերից փրկված.
Յելել են վորդիքդ, վոր տան,
Հնացած կենցաղին հարված։

* * *

Դիտում է Սաբիրը քարե,
Ու մտքում բախտավոր ժպտում.
Միտ բերում, թե քանի՜ դար է
Իր ազգը գտնվել մթում։

Թե քանի դարեր են յերկար,
Կեղեքել բեգերը խալխին.
Բեկ, ժոլա, ուզել են բեգյառ,
Նստելով թշվառի գլխին։

* * *

Դիտում է Սաբիրը քարյա,
Թե ինչպես աֆտոմ,
Սեգ-տանկ՝
ժի հակա կրիա։
Դրոշներ, բազմություն,
Կրակոտ ժի տոն...
Շարք-շարք
Կոմսոմոլ, պատկոմ,
Իսկ առաջին՝
Աթուն,
Հասան,
Իվանն ու
Ակոն.—
Շարժվում է կենդանի հսկան
Այնտեղ, ուր կան
Կատարին խաչ՝
յեկեղեցի
Մինարեին՝
կեռ
լուսին։

5.

Փողոցը գույներ է գրկել,
Փողոցը շողում է զվարթ.
Փողոցը շռինդով զուգել,
Պճնել է անսովոր մի զարդ։

Արևը փայլուն է այսոր,
Արևը հյուսել է մի խինդ.
Ուրախ են սրտերը տոչոր,
Ցնծուն է յերկինքը հակինթ։

Բոլորը կարմիր են, բոցոտ,
Կարմիր են դրոշ ու քաթան.
Թնդում են ճառերը ըմբոստ
Պողպատ է զանգվածի շղթան։

Փողոցը կարմիր է՝ բոսոր,
Փողոցը յեռում է կարծես.
Փողոցը տոնում է այսոր
Հրավառ ընդգրկում վեհ ծես։

* * *

Նայում է բեխաբար Բախշին
Այդ հղոր, հաղթական յերթին.
Կանգնել է փողոցի միջին,
Ապշել է չիստիլչին յեթիմ։

Առջևեց աարվում է պլակատ,
Իսկ վրան վոսկեզոծ շարած՝
«ԲՈՒՈՒՆՑՔ ԴՆԶԻՆ,
ՀԻՆ ԿԵՆՑԱՂԻ
ՇՆՉԻՆ»...

Շարժվում է հորձանքը յերկաթ,
Ընթանում անընդհատ հառաջ։

* * *

Մոտեցավ են զանգվածն ուժգին,
Հոխորտաց անավոր լափին,
Ու Բախշուն արկղը մեջքին
Վոլորեց ու ձուլեց թափին։

6.

Վորոշած իր ուղին անշեղ,
Քշում է զանգվածը Բախշուն.
Նա ինչ եր. մի փոքրիկ տաշեղ,
Այս հզոր ովկյանի միջում։

Գնում է, անվրդով, և ել
Խմբի հետ ձայնակցում «ուռռա».
Նրա մեջ մի հուր է վառվել,
Անսովոր բորբոքիչ քուրա։

Քաշում է հորձանքը ժոլի.
Մոռացավ, վոր որը ճաշ է.
Դեռ ի՞նչքան կաշխատի ելի,
Թե պետք է մաշիկներ մաշե։

Գնում է անվրդով, և ել
Խմբի հետ ձայնակցում «կորչե»,
—Թող կորչեն մզկիթն ել, ժամն ել,
Հրածին ակումբը կեցցե։

Փողոցը կպմել է հատերգ,
Փողոցը հրաշունչ դղորդ.

Շեփորում զանգվածը մի յերգ
Հաղթ-յերթի իր յերգը խրոխտ։

7.

—«Մենք յելել ենք բանվոր, պատկոմ,
Հրաբորբոք այս որին.
բոլորին,
բոլորին,
բոլորին...

Աշխատանքի հիմն ենք յերգում
Ազատ յերկրի դռներին.
բոլորին,
բոլորին,
բոլորին...

Դեն ենք գցել զենք ու զրահ,
Ահա կռում նոր որեր.
հրավեր,
հրավեր,
հրավեր...

Ե՜յ, վեր կացեք, յերա՜հ, յերա՜հ.
Դիմենք առաջ անվեհեր.
անվեհեր,
անվեհեր,
անվեհեր...

Ու ձեռք բերենք մի նոր ուսում,
Թող սա լինի հիմի զենք,
անհաղթ զենք,
անհաղթ զենք,
անհաղթ զենք...

Նոր պայքարի հրե ծոցում
Նոր կենցաղը կառուցենք.
կառուցենք.
կառուցենք,
կառուցենք»...

8.

—Ե՛յ, այսոր կազմել ենք մեծ տոն,
Հնացած կենցաղին լավ դաս.
Ամեն տեղ պիտ թռչի ռադիոն,
Թե ընկավ կրոնը փթած։

Ու նույնիսկ Մաշոն ել տեսավ.
Դոռ սիրտը բաբախեց ուժգին.
Շուտ գցեց ուսերին չարսավ
Ու կանգնեց դարվազի շեմքին։

—Յեկ, մեզ հետ, յեկ գնանք, իմ քույր,—
Աթուն և ամբոխից գոչում,—
Տեսնում ես շարքերը մեր կուռ,
Այս ահեղ պոռթկումի բոցում։

Տեսնում ես, յելել ենք հրթիռ,
Ջեռ տեմպով կռելու կենցաղ.
Յեկ դու ել ու հինը քանդիր.
Մեր շարքում պայքարե խիզախ։

Թուլացավ խաթունը և լուռ,
Մոռացած ծնողներ, աշխարհ,
Արձակեց մազերը դանդուր
Ու քայլեց հասատատուն, յերահ։

—Տուր ձեռքդ, յես քոնն եմ Աթու,
Թաղել եմ մտքերս տխաս.
Ջնջել է քո կամքը հատու
Իմ սրտից ամեն մի կասկած։

9.

Շարժվում է հորձանքը հառաջ,
Հուրհուրում ալ-կարմիր դրոշ.
Կանգնած է Կարպիշը սառած
Կախել է ունքերը, պռոշ։

Վեր կացավ և համալ Միրզան,
Շպրտեց փալանը մեջքին.
Ու վորպես գովեստի նշան
Խառնվեց ամբոխի հեքին,

Շարժվում է հորձանքը հրվ։ռ,
Ահա և փողոցի փալչին.
Անկյունն է պ։րփակվել շվ։ր
Ուսկ։դրում տագն։պով, ուշիմ.

Դրել է միրուքին հինա,
Հայացքը բևեռած թխպ։։.
Կարծում է դերվիշ է հիմա,
Նախազգում գ։րհուրանք ու բոթ։

Շարժվում է հ։որձ։նքը մթին,
Փրփրում ահռելի ալիք.
Ու դիպավ փալչիի մեթին
Գլորեց որբերին դալիք։

10.

Տխուր է Կարպիչը նեպման,
Կանգնել է ակնապիշ դիտում։
— Եվ կորավ չափեր ու սահման,—
Մտքի մեջ ասում է տրտում։

Վորտեղ է հեղձուցիչ մի գազ,
Բաց թողնես կոտորես, վոր թե,
Չխոսեն եվ ավել պակաս
Չպնդեն, թե մերը ղորթ է։

Յելել են կրոնը քանդեն,
Դարձել են անորեն զավակ.
Մեռնում է սրբությունն արդեն,
Կեղտոտվում հավատ ու ճաշակ։

—«Հե՛յ, գիտի, Նիկոլայ մեծ ցար,
Վո՞րտեղ ես, աշխարհի դու տեր.
Թողել ես մեզ այսպես անճար,
Եսպե՞ս եվ դադարգյուն անտեր»։

* * *

Բայց հանկարծ, սթափվեց—
Սարսափ.
Աղջիկը թափորի առաջ.

Խելագար վազելով ըշտապ
Ամբոխին մոտեցավ սառած։

Բայց իզո՞ւր. ավուր եր շղթան.
Յետ յեկավ Կարպիչը փոշման։

Շողում էր կաս-կարմիր քաթան
Ու շանթում շառագույն շուշան։

Ընպասեց Կարպիչը հերսոտ,
Կուլ տվեց փողոցի փոշին։

Ծռվել էր շրթունք ու ծնոտ,
Մտածել էլ ինչի՞ մասին։

Հաղթ եյին շարքերը հեռվում
Ցոլցոլուն ալ-շուշան դրոշ։

Նրա մեջ պայլույթն էր յեռում,
Ըզգալով վիճակը վորոշ։

# ԵՍ ՔԻԶ Է·

1.

Տեսավ ու զարհուրեց խոջան,
Ցանկացավ դիմանալ, բայց մի
Ահագին ժարդկային հոսանք
Շպրտեց պալարը դժնի։

Վայր ընկավ ըսպասեց, ու յերբ
Թափորը ներս խուժեց մզկիթ.
Ու ճեղքեց շարքերը մի կերպ,
Արնելով դունչ, ճակատ ու քիթ։

Դուրս պրծավ հևալով այսպես,
Գնում էր Փիստոնին տալ լուր.
Զգիտեր, թե նրան նույնպես
Նույն ելին աղացել սլյուր։

2.

Ահա և Փիստոնը դաժան
Կծկվել, դառել է մի ճանճ,
—Է՛յ, խոջա, խլեցին աժան
Իմ ժամը ու խաչը ճանճ։

—Ա՛յ, քեշիշ, քո տունը խաշվի,
Վիրացավ մզկիթս նեցուկ.
Տեղը չե՞ ել հիմա հաշվի,
Իջել է մեր գլխին սև սուգ։

3.

Ու իրար ձեռք-ձեռքի տված,
Մոլլան ու տերտեր
Վռազ
Վազում են։
Ճեղքում են շարքեր,
Ընկնում։
Նորեն բարձրանում արագ,
Շնչասպառ,
Հև ի հև...
Կապա,
Փառաջա,
Տվել են քաժուն,
Խենթացել իսպառ...
Մարդիկ կանգնում են ապշած
Դիտում
յերկու
եակին,
Զարմացած նրանց
Խելագար վազքին։

4.

Կեսոր։
Կառքերն են կայթում,
Կրկին
Կյանքը
Կոփվում է արթուն։
Կաթում է արևը արյուն։
Շոգն այրում։

Կրկին յերգ ու
Կանչ,
Ականջ
խլացնող
աղմուկ.
—«Լա՜վ խնձոր,
կանաչի՜ն...

1925 թ.
Բագու։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0024932

А II/4454

ԼՈՒՑՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

1. В. ЛАНТЕ „Пляска образов“
стихи, Баку 1923 г.

2 ԼԱՆՏԵ «Բառնքը» (կենցաղապատկեր)
Բաքու 1925 թ.

Դիմել հեղինակին՝

Баку, Торговая № 37

Գին 5 ռուբ.

Հրատ. № 1995—1000 Գրատ. (Ա-ն Հրատարակչ.) 1926